



# ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## ՊԱՐՈՒՅՐ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ

ՀՊՏՀ ուսումնամեթոդական աշխատանքների գծով  
պրոբեկտոր, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

## ԿԱՐԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀՊՏՀ մակրոէկոնոմիկայի ամբիոնի վարիչ,  
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

## ԶԱՂԲՈՒՐԳՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԱՍՊԻՐԱՆՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՈՒ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ

Հոդվածում քննարկվել են Զաղբուրգյան սկզբունքների հիման վրա բարձրագույն կրթության երրորդ աստիճանի՝ ասպիրանտական կրթական ծրագրի էռությունը, կառուցվածքը և ժամանակակից պահանջները: Կատարվել է ծրագրի մշակման գիտական և ուսումնամեթոդական հիմնահարցերի ամփոփ վերլուծություն, քննարկվել են միջազգային առաջավոր փորձի ուսումնասիրման և ծրագրի ներդրման առանձնահատկությունները, շրջանավարտների աշխատանքի համար տնտեսության հատվածները, ներկայացվել են համալսարանի հետազոտական միջավայրի կարևորությունը, գիտական դեկավարի գործառությունները, բացահայտվել են ծրագրի միջազգայնացման և ֆինանսավորման հնարավորությունները:

**Հիմնաբառեր.** ասպիրանտական կրթական ծրագիր, զաղբուրգյան սկզբունքներ, ուսումնական պլան, հետազոտական միջավայր, նորարարական հետազոտություն, գիտական դեկավար, տնտեսության հատվածներ, աշխատանքի շուկա

JEL: Y8, Y9, Z00

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունը, որպես Բոլոնիայի գործընթացի անդամ երկիր, վերափոխում և համապատասխանեցնում է իր հետքութական կրթության համակարգը Բեռլինի, Բերգենի և Լոնդոնի հաղորդագրություններում (կոմյունիկե) ներկայացված պահանջներին<sup>1</sup>: ՀՀ-ում բարձրագույն կրթության երրորդ աստիճանի՝ ասպիրանտական կրթության բարելավման ներկայիս նպատակներից է վերջինիս համապատասխանեցումը Եվրոպական որակավորումների շրջանակին և զայցրության սկզբունքներին: ՀՀ Կառավարության 2016 թ. հուլիսի 7-ի թիվ 714-Ն որոշմանք նոր խմբագրությամբ հաստատվել է ՀՀ որակավորումների ազգային շրջանակը (ՈԱԾ), որտեղ ամրագրված է որակավորման 8-րդ մակարդակը՝ գիտությունների թեկնածուի գիտական աստիճանով: Դա ապահովում է համապատասխան մասնագիտական կրթական ծրագրի (ԿԾ) ներդրմամբ և իրականացմամբ, որի տևողությունն առնվազն 3 տարի է և կազմում է 180 կրեդիտ (ԿԿՓԵՀ – կրեդիտների կուտակման և փոխանցման Եվրոպական համակարգ՝ ECTS): ՈԱԾ-ի ներդրման հիմնական նպատակներն են ՀՀ և Եվրոպական երկրների կրթական համակարգերի համադրելիությունը, կրթության և տնտեսության փոխադարձ կապերի ամրապնդումը, կրթական ծրագրերի միջազգայնացումը:

Ասպիրանտական կրթական ծրագրերի (Եվրոպական երկրներում՝ դոկտորական կրթական ծրագրերի) ելակետը դաշնում է ինչպես հետազոտական ունակությունների, այնպես էլ աշխատաշուկայում պահանջված փոխանցելի անձնական/մասնագիտական հնտությունների ու կարողությունների ձևավորումը՝ հիմք ընդունելով առանձին մասնագիտությունների որակավորման բնութագրիչները և ծրագրային մոդուլների հստակ ձևակերպված ու չափելի ելքային արդյունքները:

Հարկ է ընդգծել, որ ասպիրանտական կրթության հիմնական բաղադրիչը գիտական նորույթ պարունակող (նորարարական) հետազոտության միջոցով գիտելիքի զարգացումն է: Միևնույն ժամանակ, ակնկալվում է, որ բարեփոխանական ասպիրանտական ուսումնառությունը պետք է ավելի շատ աշխատաշուկայի կարիքները բավարարի, իսկ վերջինս, ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը, համալսարանական գիտական շրջանակից ավելի լայն է:

Ասպիրանտական կրթական ծրագրի հայեցակարգային դրույթները հիմնվում են ՀՀ աշխատաշուկայի և կրթական շուկայի պահանջների ուսումնասիրության արդյունքների, շրջանավարտների համար վերջնարդյունքների ձևավորման, զայցրության սկզբունքների<sup>2</sup>, ազգային և Եվրոպական որակավորումների շրջանակի վրա՝ ապահովելով երրորդ աստիճանի կրթական ծրագրերի որակը: Կրթական ծրագրերը ներառում է ոչ միայն կրթական նպա-

<sup>1</sup> 2003 թ. Բեռլինի գագաթնաժողովը ներմուծել է Բոլոնիայի գործընթացումների նոր ուղղությունը դոկտորական մակարդակի որակավորումների վերաբերյալ՝ պաշտոնապես ընդգրկելով դրամը Բոլոնիայի գործընթացում՝ որպես բարձրագույն կրթության երրորդ աստիճան: 2005 թ. Բերգենի նախարարական գագաթնաժողովը լիազորել է Եվրոպական համալսարանական ասոցիացիային (ԵՀԱ՝ EUA)՝ մշակելու դոկտորական ծրագրերի հիմնարար սկզբունքներ՝ 2007 թ. Լոնդոնի գագաթնաժողովին ներկայացնելու համար: ԵՀԱ-ի գելույցի համար որպես հիմք են ծառայել զայցրության 10 սկզբունքները, որոնք ձևավորվել են 2005 թ. Զայցրություն կայացած Բոլոնիայի սեմինարում և երաշխավորությունների տեսքով անվտանգ 2006 թ. Նիցցայի եզրափակիչ սեմինարում:

<sup>2</sup> Զայցրության սկզբունքները դիտարկվում են որպես համընդհանուր Եվրոպական չափորոշիչ՝ նոր ասպիրանտական ծրագրերի ստեղծման և մշակման համար, ինչպես նաև որպես Եվրոպական հետազոտական և բարձրագույն կրթության ոլորտների միջև կապի դրսերում:

տակմերի սահմանումը, այլ նաև կարիերայի զարգացման պլանը և խորհրդա-  
տվությունը:

Այսպիսով՝ բարձրագույն կրթության երրորդ աստիճանի ծրագրեր հիմ-  
նելու և իրականացնելու զալցբուրգյան սկզբունքները կամ չափորոշիչները  
հետևյալն են՝

1. ասպիրանտական կրթության հիմնական բաղադրիչը գիտական նո-  
րույթ պարունակող նորարարական հետազոտության միջոցով գիտե-  
լիքի զարգացումն է,
2. ներառումը համալսարանի ռազմավարությունում և քաղաքականու-  
թյունում,
3. բազմազանության կարևորությունը (օրինակ՝ համատեղ, ինչպես նաև  
միջզիտակարգային ասպիրանտական ծրագրեր և այլն),
4. ասպիրանտները՝ որպես սկսնակ հետազոտողներ (օրինակ՝ հետա-  
զոտության միջոցով ուսուցում, ներդրում նոր գիտելիքի ստեղծմանը,  
գիտելիքի միջոցով հասարակության համար նրանց ներդրումը),
5. դեկավարման և գնահատման կարևոր դերը (օրինակ՝ ասպիրանտ-  
ների, դեկավարների և հաստատության համատեղ պարտավորու-  
թյունները, դեկավարի աշխատանքի ձանաչումը, գնահատումը և  
ներառումը դասախոսի բենվածության և պաշտոնական առաջնա-  
դացման պահանջների մեջ, դեկավարների մասնագիտական հմտու-  
թյունների զարգացումը),
6. ասպիրանտների բավարար թվի ծևավորումը (օրինակ՝ ծրագրի ընդ-  
հանուր իրապարակայնությունը, մրցակցային ասպիրանտուրայի  
հիմնումը, ասպիրանտների բազմազանությունը, ընտրողականության  
և գերազանցության ապահովումը, ասպիրանտական ծրագրի հա-  
տուկ նպատակները),
7. տևողությունը (ուսումնառության ընդհանուր ժամանակը և ատենա-  
խոսությունը ավարտելու համար սահմանված ժամանակը),
8. նորարարական կառույցների խրախուսումը (օրինակ՝ միջզիտակար-  
գային ուսուցման և փոխանցելի հմտությունների զարգացման մար-  
տահրավերներին համապատասխանեցումը),
9. շարժումակության խթանումը (օրինակ՝ դասընթացներ, այցելություն-  
ներ և գիտական աշխատանքներ այլ համալսարաններում ու երկրնե-  
րում),
10. համապատասխան ֆինանսավորման ապահովումը:

Հարկ է նշել, որ մինչև զալցբուրգյան սկզբունքների կիրառումը, ասպի-  
րանտուրայում ներդրվել և ներկայումս էլ գործում է հետազոտողի եռամյա  
կրթական ծրագիրը, որն էական առաջընթաց քայլ էր բարձրագույն կրթու-  
թյան երրորդ աստիճանի ծևավորման և արմատավորման գործում: Զալց-  
բուրգյան սկզբունքները Եվրոպայի բուհերում բարեփոխումների համար ան-  
հրաժեշտ հիմք են ապահովում: Ակնկալվում է, որ <<-ում դրանց կիրառումը  
կարող է ունենալ նույն դերն ու նշանակությունը:

#### **Ասպիրանտական կրթական ծրագրի հայեցակարգային դրույթները**

Ներդիտային հենքով ասպիրանտական ԿԾ իրականացման նպատակն  
է վերլուծել << աշխատաշուկայի հետազոտական հատվածը, դրա զարգաց-  
ման միտումները և, հաշվի առնելով համալսարանի զարգացման առանց-  
քային ուղղությունները, ըստ կրթական վերջնարդյունքների և թյունինգյան

մեթոդաբանությամբ մշակել ու գարզացնել ասպիրանտական կրթական ծրագիրը:

Անհրաժեշտ է շեշտել, որ գիտելիքահենք համընդհանրական (գլոբալ) տնտեսության կազմավորման պայմաններում բարձրագույն կրթության երրորդ աստիճանը (ասպիրանտուրա) կոչված է ծևավորելու հետազոտողների նոր սերունդ, որը, ունենալով խորացված մասնագիտական գիտելիքների գիտության և տեխնոլոգիաների որոշակի բնագավառում, միևնույն ժամանակ օժտված կլինի ավելի ընդհանուր (փոխանցելի) աշխատանքային հմտություններով և կարողություններով, ինչպահիք են՝ որը կյանքի ընթացքում սովորելու, տարաբնույթ հիմնախնդիրներ ծևակերպելու ու լուծելու, քննադատական վերլուծության կարողությունները, գրագրական և հաղորդակցային ձիրքերը, թիմային աշխատանքի և միջազգային թիմերի կազմում աշխատելու ունակությունը և այլն:

Իրավամբ, այն այսուհետև ապահովելու է ասպիրանտի կարողությունների ավելի մեծ շրջանակ՝ ապագա հետազոտական կարիերայի ավելի լայն տիրույթի ընդգրկմամբ: Նման ուսուցումը ավանդական գիտամանկավարժական (ակադեմիական) առաջընթացից բացի ներառում է նաև հետազոտական աշխատանքի այլ հնարավորություններ՝ արտադրությունում, ծառայություններում, պետական կառավարման մարմիններում, գործարար հատվածում, հետազոտական կազմակերպություններում, միջազգային կառույցներում և այլն:

ԿԾ-ն պետք է միտված լինի տնտեսական բազմաբնույթ հարաբերությունների բնագավառի բարձր որակավորում, լայն նտահորիզոն և աշխարհայացք, տնտեսագիտական մտածողություն ունեցող մասնագետների պատրաստմանը, համընդհանրացման և տարածաշրջանային միասնացման խորացման պայմաններում տնտեսագիտական հետազոտությունների իրականացման հետ կապված խնդիրների լուծմանն ու դրանց կիրառման ուղիների բացահայտմանը: Կրթական ծրագիրը համակարգված պատկերացում է ծևավորում ժամանակակից տնտեսագիտության օրինաչափությունների, միտումների և հակասությունների վերաբերյալ:

Կրթական ծրագրերը պետք է տեսական, մեթոդաբանական և կիրառական հիմքեր ստեղծեն՝ ձիշտ հասկանալու ազգային և համաշխարհային տնտեսությունում տեղի ունեցող տնտեսական գործընթացները և երևույթները, ինչպես նաև դրանց վրա ազդող գործոնների ազդեցության չափը, պատկերացում ծևավորեն ազգային տնտեսության կառուցվածքի, զարգացման միտումների, տնտեսավարող սուբյեկտների գործունեության առանձնահատկությունների մասին, ապահովեն պետական կարգավորման և շուկայական ինքնակարգավորման նպատակով կիրառվող գործիքակազմի յուրացումը:

Հարկ է նշել, որ ասպիրանտական ԿԾ ներքին շահակիցներն են ասպիրանտուրայում ուսումնառողները և ակադեմիական հանրությունը, իսկ արտաքին շահակիցները՝ գործատուները, շրջանավարտները, մասնագիտական ընկերակցություններն ու հասարակական կազմակերպությունները:

ՀՀ աշխատաշուկայի և կրթական շուկայի առավելագույնս ընդգրկուն ընտրանքային հետազոտության արդյունքում կրացահայտվեն այն վերջնարդյունքները, որոնք անհրաժեշտ են ասպիրանտական կրթական ծրագրերը ՀՀ որակավորումների ազգային շրջանակի հիման վրա մշակելու համար:

### **Ասպիրանտական կրթական ծրագրերի կառուցվածքը**

Ասպիրանտական կրթական ծրագիրը բաղկացած է երկու փոխկապված կառուցմանամբ՝ կրթական և հետազոտական: Կրթական ծրագիրը պլանավորվում է մի շարք ընդհանուր սկզբունքների հիման վրա:

Ասպես՝ համաձայն ՀՀ-ում գործող օրենսդրության, ասպիրանտուրայում ուսումնառության եռամյա (հեռակա ուսուցման դեպքում՝ քառամյա) ծրագրի լրիվ բեռնվածությունը համարժեք է 180 կրեդիտային միավորի կամ 5400 ժամի (1 կրեդիտ = 30 ժամ)՝ ներայալ լսարանային, արտալսարանային և ինքնուրույն աշխատանքները: Այս առումիվ, նպատակահարմար է, որ ծրագրի կրթական բաղկացուցիչը կազմի 50 կրեդիտ կամ համապատասխանի 1500 ժամ լրիվ ուսումնական բեռնվածությանը, ներայի ընդհանուր, մասնագիտական պարտադիր ու ընտրովի դասընթացներ և այլ կրթական մոդուլներ (ներայալ որակավորման քննությունը և փորձառությունը):

Ծրագրի մնացյալ ծավալը՝ 130 կրեդիտը (3900 ժամ), պետք է կազմի հետազոտական բաղկացուցիչը՝ գիտաժողովներին մասնակցության, գիտական հրատարակումների, ատեսավորումների, ատենախոսության կատարման, դրա նախնական փորձաքննության և հրապարակային պաշտպանության տեսքով:

Ասպիրանտական ԿԾ յուրացումից և ատենախոսության հրապարակային պաշտպանությունից հետո մասնագիտական խորհրդի որոշմամբ և ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի (ԲՈՀ) հաստատմամբ շրջանավարտին շնորհվում է տնտեսագիտության թեկնածուի (PhD in Economics) գիտական աստիճան:

**Միջազգային առաջավոր փորձի ուսումնասիրության հիմնական ուղղությունները**

Եվրոպայի առաջատար համալսարանների փորձն<sup>3</sup> ուսումնասիրելիս ուսանելի են հատկապես դրանց հետազոտական գործունեությունը, ձեռնարկությունների հետ կապերը, հետազոտական ռազմավարությունը և միջավայրը, հետազոտական ենթակառուցվածքները, ասպիրանտների գնահատման և քննությունների կարգը, նրանց կարիերայի և գիտական դեկավարման համակարգերը, գիտելիքների փոխանցումը և հետազոտողների զարգացումը, ասպիրանտների ընդունելության և առաջնարարության կարգը:

Մեթոդաբանական առումով հետաքրքրություն են ներկայացնում նաև հետազոտական և դոկտորական դպրոցները, հետազոտական կրթական ծրագրերը և դասընթացները, համալսարանների որակի չափորոշիչները և համակարգերը, հետազոտական քանատերների գործունեությունը:

Յուրաքանչյուր փորձում կան ռացիոնալ բաղադրիչներ, որոնց տեղայնացումն ու կիրառումը ՀՀ ասպիրանտական կրթական ծրագրերում կարող է բարձրացնել ասպիրանտական կրթության արդյունավետության մակարդակը:

<sup>3</sup> Ասպիրանտական կրթական ծրագրի մշակման գործնքացում արժեքավոր է, մասնավորապես՝ Բաթ Սպայի (Մեծ Բրիտանիա)՝ <https://www.bathspa.ac.uk/>, Ստոկհոլմի Տեխնոլոգիայի արքայական ինստիտուտի (Շվեդիա)՝ <https://www.kth.se/en>, Հեյդելբերգի (Գերմանիա)՝ <https://www.uni-heidelberg.de/> և Ժիրոնայի (Իսպանիա)՝ <https://www.udg.edu/> Վարկանիշային համալսարանների, իսկ տնտեսագիտության գծով՝ Շվեդիայի Գոտենբորգի համալսարան՝ <http://economics.handels.gu.se/english/education/doctoral+programme+in+economics>, Ստոկհոլմի տնտեսագիտության դպրոցի՝ <https://www.hhs.se/en/Education/PhD/economics/process-and-content/> փորձը:

Նպատակահարմար է օգտագործել է նաև թյունինգյան մեթոդաբանությունը, որը կողմնորոշում է դեպի:

- ասպիրանտ՝ որպես կրթական գործընթացի ակտիվ գործող անձ (stakeholder՝ շահակից),
- գործատուն՝ ներկայիս աշխատաշուկայում պահանջված շրջանավարտի որակը որոշելու և ապագայի համար աշխատաշուկայի պատվերի և սոցիալական պահանջարկի կանխատեսման նպատակով,
- Վերջնարդյունքները (learning outcome), որոնք անհրաժեշտ են շրջանավարտին՝ աշխատաշուկայում մրցունակ լինելու համար:

### **Ծրջանավարտների համար աշխատաշուկայի թիրախնային հատվածները**

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ տնտեսագիտության գծով ասպիրանտական ԿԾ շրջանավարտների, այսինքն՝ տնտեսագետ հետազոտողների նկատմամբ պահանջարկն առկա է տնտեսության և աշխատաշուկայի հետևյալ հատվածներում:

- տնտեսության պետական հատվածում՝ << պետական կառավարման հանրապետական և տարածքային մարմիններում,
- տնտեսության մասնավոր հատվածի ընկերություններում,
- հետազոտության և զարգացման (R&D) հատվածում՝ գիտահետազոտական ինստիտուտներում, հետազոտական կենտրոններում և համալսարաններում,
- միջազգային կազմակերպությունների ներկայացուցչություններում:

Պետական կառավարման մարմինների շարքում հարկ է նշել << նախագահի, << Ազգային ժողովի, << Կառավարության, << տնտեսության զարգացման և ներդրումների, ֆինանսների, աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունների աշխատակազմները, մյուս նախարարությունների տնտեսագիտական վարչությունները, << ազգային վիճակագրական ծառայության, << կենտրոնական բանկի, << տնտեսական մրցակցության ապահովման, << հանրային ծառայությունների կարգավորման պետական հանձնաժողովների, մարզպետարանների և համայնքապետարանների աշխատակազմները և այլ պետական կազմակերպություններ:

ԿԾ շրջանավարտների վերաբերմամբ մասնավոր հատվածի ընկերությունները նույնպես ունեն պահանջարկ՝ տվյալ ոլորտի ուսումնասիրության, տվյալ ընկերության տնտեսական ցուցանիշների հաշվարկման, զարգացման ռազմավարության մշակման, օպտիմալացման խնդիրների լուծման, շուկաների ուսումնասիրության ու տնտեսական կանխատեսումներ կատարելու համար:

ԿԾ շրջանավարտների նկատմամբ հետազոտության և զարգացման հատվածում պահանջարկն առկա է տարբեր գերատեսչություններում գործող գիտահետազոտական ինստիտուտներում և միջգիտակարգային խնդերում, հետազոտական կենտրոններում, բուհերի տնտեսագիտական ֆակուլտետներում:

ԿԾ շրջանավարտների նկատմամբ պահանջարկն առկա է նաև միջազգային տնտեսական կազմակերպությունների՝ <<-ում գործող ներկայացուցչություններում, մասնավորապես՝ Արժույթի միջազգային հիմնադրամի, Համաշխարհային բանկի, Միավորված ազգերի կազմակերպության և դրա տարբեր հիմնադրամների, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալութեան գործադրություններում:

թյան, Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկի, Միջազգային ֆինանսական կորպորացիայի, Եվրապիական զարգացման բանկի, Ասիական զարգացման բանկի և այլ միջազգային կազմակերպությունների ներկայացուցչություններում:

Հյայատանի Հանրապետության գրադարձների դասակարգչում ԿԾ շրջանավարտների որակավորմանը համապատասխանում են գրադարձների մի շարք տեսակներ<sup>4</sup>: Դրանք իհմնականում դասակարգչի 3-րդ բաժնում են՝ հետևյալ իհմնական խոչըն խնդերի անվանումներով, որոնք, իրենց հերթին, ընդգրկում են բազմաթիվ ենթախմբեր:

1. օրենսդիր, գործադիր, դատական և տեղական ինքնակառավարման մարմինների, քաղաքական ու հասարակական կազմակերպությունների ղեկավարներ,
2. կազմակերպությունների և իհմնարկների, այդ թվում՝ դրանց կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներ,
3. փոքր կազմակերպությունների ղեկավարներ,
4. ֆինանսատնտեսական, վարչական և սոցիալական բնագավառների աշխատողներ,
5. տնտեսագետներ,
6. հարկային ծառայողներ,
7. պետական սոցիալական և կենսաթոշակային ապահովության ծառայողներ,
8. պետական լիցենզավորման ծառայողներ:

Հյայատանի Հանրապետության տնտեսական գործունեության տեսակների դասակարգչում ԿԾ շրջանավարտների որակավորմանը համապատասխանում են տնտեսական գործունեության հետևյալ իհմնական տեսակները՝ (<Ղ-011-2013, մաս 1),<sup>5</sup> որոնք, իրենց հերթին, ընդգրկում են մի շարք ենթատեսակներ.

- ֆինանսական և ապահովագրական գործունեություն,
- պետական կառավարում և պաշտպանություն, պարտադիր սոցիալական ապահովագրություն:

#### **Գիտական ղեկավարի գործունեությունը**

ԿԾ-ում գիտականի կայացման գործում պետք է նորովի գնահատել գիտական ղեկավարի դերն ու նշանակությունը: Ղեկավարի աշխատանքը ասպիրանտական կրթության որակի էական մասն է: Ավանդաբար, ինչպես երկրի փորձն է վկայում, գիտական ղեկավարների աշխատանքն առավել ակտիվանում է ասպիրանտի ուսումնառության վերջին տարիներին: Սակայն միջազգային փորձը ցույց է տալիս, որ այդ ակտիվությունն անհրաժեշտ է սկզբնական շրջանում, իսկ ասպիրանտի՝ հետազոտողի հասունացմանը գուգընթաց պետք է ավելյանա նաև նրա ինքնուրույնությունը:

Աստեղային գիտական ղեկավարներն աջակցում են ասպիրանտներին հետազոտության ընթացքում՝ հատկապես նախնական փուլում, օգնում նրանց թեմա ընտրելու, ուսումնասիրելու և համակարգված տիրապետելու նախկինում հրատարակված նյութերին: Ասպիրանտն իր ընտրած

<sup>4</sup> Տես <<Կառավարության 2013 թվականի փետրվարի 7-ի N 141-Ն որոշում, Հավելված N 3, Հյայատանի Հանրապետության դասակարգիչ <Ղ-2009, Հյայատանի Հանրապետության գրադարձների դասակարգիչ:

<sup>5</sup> Տես Տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչ, խմբ. 2 (<<Էկոնոմիկայի նախարարի N 874-Ն 19.09.2013 թ. հրաման՝ <<ԳՏ 04.11.2013 թ. 30(474).1):

ոլորտում դաշնում է փորձագետ, այդուհանդերձ, քանի որ գիտական ղեկավարը բավականաչափ տիրապետում է տվյալ ոլորտին և մասնագիտական գրականությանը, կարողանում է տեսնել այդ թեմայով առկա գրականության (ասպիրանտի կողմից օգտագործված) ամփոփման հնարավոր բացթողումները, հետազոտության թերությունները և գիտական խնդիրները: Գիտական ղեկավարը, քաջատեղյակ լինելով ասպիրանտի աշխատանքին, նրա հետազոտական խնդիրներին, վերջինիս ուղղողում է տվյալների հավաքագրման գործիքների, հաճապատասխան մեթոդաբանության և դասընթացների ընտրության հարցերում:

Գիտական ղեկավարների ինստիտուտի գարգացման գործում կարևոր է նրանց՝ ակտիվ գիտական գործունեությամբ, հետազոտական ծրագրերի իրականացմամբ գրադվելու խթանների ստեղծումը: Գիտական ղեկավարների վերապատրաստումը ևս կարող է կարևոր խթան դարձնալ ղեկավարման արդյունավետության աստիճանի բարձրացման, հետազոտական խմբերի հաջող ղեկավարման հարցերում: Չատ երկրներում հաջողությամբ կիրառվում է ասպիրանտի համատեղ ղեկավարման (փորձառու և սկսնակ ղեկավարների համատեղում) ինստիտուտը: Այդ դեպքում ավագ և հմուտ ղեկավարի փորձի փոխանցումն իրենից ավելի երիտասարդ գործընկերներին կարող է փոխշահակվետ լինել:

Հաշվի առնելով գիտական ղեկավարների ժամանակակից գործառույթները՝ նպատակահարմար է նաև «Հ օրենսդրահիրավական համակարգում կիրառել «ասպիրանտի գիտական ղեկավար» բնորոշումը՝ ներկայումս օգտագործվող «ատենախոսության գիտական ղեկավարի» փոխարեն:

### **Հետազոտական միջավայրը**

Նշենք, որ հետազոտական միջավայրը կազմակերպվում է այնպես, որ ասպիրանտները աշխատանքի սկզբնական փուլից սկսած հնարավորություն ունենան դաշնագլու անկախ հետազոտողներ, այսինքն՝ պատասխանատվություն ստանձնեն իրենց նախագծի սահմանների, ուղղվածության և ընթացքի համար: Հաճալսարանը պատասխանատու է հետազոտական մտածելակերպ ձևավորելու համար և ստեղծում է այնպիսի նպաստավոր միջավայր, որտեղ ասպիրանտները կարող են զարգանալ: Ասպիրանտական հետազոտությունն իրականացվում է ներառական հետազոտական միջավայրերում, որոնք թույլ են տպիս ասպիրանտներին այլ հետազոտողների հետ միասին հետազոտական մշակույթի ակտիվ մասնակիցը լինել:

Դասավանդվող դասընթացները, իհարկե, նպաստում են ասպիրանտի գիտելիքների ձևավորմանը, հմտությունների և կարողությունների ձեռքբերմանը, այդուհանդերձ, զալցբուրգյան սկզբունքների համաձայն, գիտական աստիճան ստանալու համար ասպիրանտները պետք է կատարեն նորարարական հետազոտություն: Ասպիրանտական կրթության հիմնական արդյունքները՝ ստեղծագործական մտածողությունը, ինքնուրույնությունը, ձկուն և քննադատական մտածելակերպը, ձևավորվում են միայն հետազոտություն կատարելու միջոցով: Խթանող հետազոտական միջավայր ապահովում է հետաքրքրասիրության և ստեղծագործական մտածողության շնորհիվ:

Հետազոտական միջավայրի մաս կարող են կազմել հետազոտական կենտրոնները (օրինակ՝ ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնը), գիտական լաբորատորիաները, որոնց առաքելություններից պետք է լինի գիտահետազոտական աշխատանքներում ասպիրանտների ներգրավումը:

Այդուհանդերձ, պետք է նշել, որ այժմ ասպիրանտական կրթության ոլորտում պետք է կարևորել ինչպես հետազոտության արդյունքը՝ ատենախոսությունը, այնպես էլ հենց իրեն՝ ատենախոսին՝ իր հետազոտական հմտություններով և կարողություններով։ Դա շատ մեծ նշանակություն ունի զբաղվածության ոլորտի ժառայությունների զարգացման համար։ Հետազոտողները՝ որպես նոր գիտելիք ստեղծողներ, մասնակցում են որոշումների կայացման գործընթացին։ Նրանց հետ խորհրդակցում են, երբ կայացվող որոշումները վերաբերում են նրանց աշխատանքին։

### **Ծրագրի միջազգայնացումը**

Հարկ է նկատել, որ ժամանակակից պայմաններում միջազգային մրցունակ ասպիրանտական կրթության համար անհրաժեշտ է ապահովել դրա միջազգայնացումը։

Այլ երկրների համալսարաններում և <<-ում գործող բուհերում ուսումնառության որոշակի ժամանակահատվածի կամ փորձառության անցկացումը ասպիրանտական կրթական ծրագրի բաղադրամասերից է։ Շարժունությանը մասնակցող ուսումնառողներին երաշխավորվում է վերադարձից հետո դրսում քննական դասընթացների (ներառյալ նաև գնահատականների)՝ համալսարանում պաշտոնական ձանաշնման համար։

Ընդհանրապես, շարժունությունը իրականացվում է հիմնականում հետևյալ կերպ։

- Վիրտուալ շարժունություն,
- միջազգային կամ միջքուհական գիտաժողովներ,
- ասպիրանտական դասընթացներ այլ համալսարաններում,
- ավելի երկարաժամկետ ուսումնական այցելություններ այլ համալսարաններ,
- այլ համալսարաններում կարճաժամկետ կամ երկարաժամկետ գիտական աշխատանք։

Դասախոսների և ասպիրանտների նաև համատեղ շարժունություն ապահովելու հնարավորություն կարող է ստեղծվել։

- ասպիրանտի մեկ առարկայի կամ գիտակարգի շրջանակում,
- հետազոտողների խումբ ամբիոնում կամ ֆակուլտետում,
- հետազոտողների խումբ համալսարանում,
- հետազոտողների խումբ <<-ում գործող մի քանի համալսարաններում,
- հետազոտողների խումբ այլ երկրների մի քանի համալսարաններում։

### **Ասպիրանտների ֆինանսավորման ապահովումը**

Ասպիրանտների ֆինանսավորումը կարող է իրականացվել պետության կողմից կամ համալսարանի միջոցներից, հնարավոր են նաև այլ համակցություններ։ Կան նաև արտաքին ֆինանսավորման աղբյուրներին դիմելու տարրեր ուղիներ։

**Ասպիրանտների ներգրավվածության տեսակները** հիմնականում հետևյալն են։

- **Կրթարշակառուներ:** Այս ասպիրանտները տարբեր աղբյուրներից (առաջին հերթին՝ պետությունից) ստանում են կրթարշակ։
- **Ինքնաժինանսավորող ասպիրանտներ:** Ասպիրանտն օգտագործում է սեփական միջոցները և վճարովի հիմունքներով սովորում է համալսարանի ասպիրանտուրայում։

- Համալսարանում աշխատանքի ընդունված ուսանողներ, ովքեր վարձատրվում են համալսարանի ֆինանսական միջոցներից:
  - Ասպիրանտն ինքը դիմում է տարբեր հիմնադրամների՝ ֆինանսավորման համար: Այսպիսի ֆինանսավորումը կարող է լինել ասպիրանտուրայում սովորելու ամբողջ ժամանակահատվածի (3-4 տարի) կամ դրա մի մասի համար:
  - Կայացած հետազոտողները (պրոֆեսորներ և առաջատար դոցենտներ) դիմում են հետազոտական խմբերի ֆինանսավորման համար՝ դրանցում ներառելով նաև ասպիրանտներին:
- Ֆինանսավորման աղբյուրները** հիմնականում հետևյալն են.
- համալսարան (սեփական միջոցներով ֆինանսավորում),
  - պետական հետազոտական հիմնադրամներ,
  - հետազոտական կենտրոններ,
  - պետական կառավարման մարմիններ,
  - ընկերություններ,
  - մասնավոր հիմնադրամներ,
  - միջազգային հիմնադրամներ,
  - միջազգային կառույցներ,
  - նվիրատվություններ:

Համակարգված կրթական ծրագիրը (պարտադիր և ընտրովի ասպիրանտական դասընթացներ, պարբերաբար կազմակերպվող հետազոտական սեմինարներ, դասախոսություններ և մեթոդական դասընթացներ, հմտություններին նվիրված սեմինարներ) ներառում է ոչ միայն կրթական նպատակների սահմանումը. պետք է ընդգրկի նաև կարիերայի զարգացման ծրագիր և խորհրդատվություն, որն իրականացվում է համալսարանում և դրանից դուրս գործատուների հետ պարբերական հանդիպումների միջոցով: Հետևաբար՝ անհրաժեշտ է ընդլայնել ասպիրանտական կրթական ծրագրերի արտաքին շահակիցների շրջանակը և հասնել նրանց կողմից հետազոտողների նկատմամբ պահանջարկի ավելի համապարփակ և հստակ ձևակերպմանը:

Նպատակահարմար է, որ << Կառավարությունը, ասպիրանտուրայի պետական պատվերի առկայության դեպքում, սահմանի կարևոր գիտական առաջնահերթությունները և, ըստ այդմ՝ առկա ուսուցմամբ կրթաթոշակառու ասպիրանտների ատենախոսությունների թեմատիկ ուղղությունները:

Խելամիտ է նաև համալսարաններում ասպիրանտների ընդունելությունը կազմակերպելիս կիրառել միջազգային ոլորտում ընդունված մի շարք պահանջներ, մասնավորապես՝ հայցագրույցի (PhD application interview) անցկացում հանձնաժողովում, որը կբացահայտի դիմորդի իրական շարժառիթները, և/կամ մոտիվացիոն նամակի (Letter of Motivation) ու դիմորդի հետազոտական նախագծի (Research proposal) ներկայացում:

Այսպիսով՝ ասպիրանտական կրթության տեսլականն է շահագրգռել երկրի լավագույն հետազոտողներին՝ շարունակելու իրենց ասպիրանտական կրթությունը համալսարանում: <<-ում հարկավոր է կիրառել այս կրթության նորարարական մոտեցում՝ շեշտը դնելով միջգիտակարգային, համակարգված ասպիրանտական ծրագրի, ատենախոսությունների համատեղ դեկավարման և կարիերայի զարգացման վրա: << ասպիրանտական կրթությունը կարգավորող օրենսդրափական համակարգը պետք է հնարավորինս ներառի զայցքուրզայն սկզբունքներն արտացոլող դրույթները:

### Օգտագործված գրականություն

1. «ՀՀ Կրթության որակավորումների ազգային շրջանակը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 31.03.2011 N322-Ն որոշում:
2. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 31-ի N332-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ Կառավարության 2016 թ. հուլիսի 7-ի N 714-Ն որոշում:
3. «ՀՀ-ում ասպիրանտուրայում և դոկտորանտուրայում ուսուցման կարգը՝ հաստատված ՀՀ Կառավարության 25.02.2016 թ. հ. 238-Ն որոշմամբ:
4. «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգը»՝ հաստատված «ՀՀ Կառավարության 08.08.1997 թ. հ. 327 որոշմամբ, փոփոխությունները՝ 21.10.2010 թ. հ. 1436-Ն, 26.02.2015 թ. հ. 214-Ն, 25.02.2016 թ. հ. 260-Ն և 30.06.2016 թ. հ. 750-Ն որոշումներով:
5. «ՀՀ Կառավարության 7.02.2013 N 141-Ն որոշման «Հասակարգիչ, ՀՊ-2009, Հայաստանի Հանրապետության զբաղմունքների դասակարգիչ»:
6. Տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչ, խմբ.2 («Էկոնոմիկայի նախարարի N 874-Ն 19.09.2013 թ. հրաման «ՀՏ 04.11.2013 թ. 30/ (474).1):
7. Գրիգորյան Կ. Հ., Կրթության բաղադրիչը «Հ մարդկային ներուժի և կայուն տնտեսական զարգացման գնահատման համակարգում», «Գիտակրթական համակարգի զարգացման առաջնահերթությունները «Հ մարզերում» գիտաժողովի նյութեր, ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղ, «Հայրապետ» հրատ., 2015:
8. Դոկտորական ծրագրերը Եվրոպական համալսարաններում, EUA-ի գեկույցը:
9. Դոկտորական ծրագրերը գիտելիքի Եվրոպայում, Բոլոնիայի սեմինարը (Զալցբուրգ, 2005):
10. "Implementation of Salzburg Principles in Republic of Armenia", Training Kit, Tempus Veritas project Structural development of the third cycle based on salzburg principles, 2016.
11. "Lessons learnt", study visit booklet, with support of the Tempus program of the European Commission, Tempus Veritas project Structural development of the third cycle based on salzburg principles, 2016.
12. <http://economics.handels.gu.se/english/education/doctoral+programme+in+economics>
13. [www.hhs.se/en/Education/PhD/economics/process-and-content/](http://www.hhs.se/en/Education/PhD/economics/process-and-content/)
14. <https://www.bathspa.ac.uk/>,
15. <https://www.kth.se/en>
16. <https://www.uni-heidelberg.de/>
17. <https://www.udg.edu/>

**ПАРУЙР КАЛАНТАРЯН**

Проректор по учебно-методическим работам АГЭУ,  
кандидат экономических наук, доцент

**КАРЕН ГРИГОРЯН**

Заведующий кафедрой макроэкономики АГЭУ,  
кандидат экономических наук, доцент

**Научные и учебно-методические проблемы разви-  
тия и внедрения докторских образовательных прог-  
рамм на основе зальцбургских принципов.**— В статье  
рассматриваются основные принципы докторского образо-  
вания на основе зальцбургских принципов, концептуальные  
аспекты программы присвоения докторских степеней, образо-  
вательные и исследовательские составляющие структу-  
ры докторской программы и новые требования к созданию  
программ PhD в сфере экономики. Изучены соответствую-  
щие положения документов, регулирующих аспирантские  
образовательные процессы и научно-исследовательскую  
деятельность. Сделан итоговый анализ научных и учебно-  
методических вопросов разработки программы на основе  
результатов изучения требований рынка труда и образова-  
тельных рынков РА. Обсуждены международный опыт,  
особенности реализации программы, сектора экономики  
для профессиональной карьеры выпускников. Выявлено  
значение исследовательской среды университета, функций  
и деятельности научных руководителей, а также возмож-  
ностей для интернационализации и финансирования аспи-  
рантуры.

**Ключевые слова:** поствузовская профессиональная уче-  
ба, докторская образовательная программа, учебный план,  
принципы Зальцбурга, научный руководитель, исследователь-  
ская среда, сегменты экономики, рынок труда.

JEL: Y8, Y9, Z00

**PARUYR KALANTARYAN**

*Vice-Rector on Educational-Methodical Matters  
at ASUE, PhD in Economics*

**KAREN GRIGORYAN**

*Head of the Chair of Macroeconomics at ASUE,  
Associate Professor, PhD in Economics*

**Scientific and Educational-Methodical Issues of the  
Development and Implementation of Doctoral Educational  
Programs on the Basis of Zalzburg Principles.**— The paper  
discusses the main principles of doctoral education on the basis  
of the Salzburg Principles, the conceptual aspects of the  
doctoral degree awarding programs in economics, educational  
and research components of the doctoral program structure and

new requirements for making PhD programs. Relevant points of the documents regulating postgraduate educational processes and scientific-research activities have been studied. A summary analysis of the scientific and educational-methodological issues of the program development has been made based on the results of the study of labor and educational markets' requirements of the RA. The international experience, the peculiarities of the implementation of the program, the sectors of economy for the graduates' professional career were considered. The importance of the university's research environment, the functions and activities of a scientific supervisors, and the possibilities for internationalization and funding of the doctoral educational program have been identified.

**Key words:** *postgraduate studies, PhD educational program, curriculum, Salzburg principles, scientific supervisor, research environment, segments of the economy, labor market.*

JEL: Y8, Y9, Z00